27 օգոստոսի 2020 թվականի N 1409 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 2-Ի N 1911-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 63-րդ հոդվածը, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ և 68-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 2-ի «Հայաստանի Հանրապետության մարզերի առողջապահության համակարգերի օպտիմալացման ծրագրերը հաստատելու մասին» N 1911-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման N 3 հավելվածի Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի առողջապահության համակարգի օպտիմալացման ծրագրի «III. «Արարատի տարածաշրջան» բաժնի՝

ա. 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Վերակազմակերպել «Վեդու ծննդատուն» փակ բաժնետիրական ընկերությունը (պետական գրանցման համարը՝ 51.140.00334)՝ այն միացնելով «Վեդու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը (պետական գրանցման համարը՝ 222.120.00898):

Ստորև ներկայացված է «Վեդու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության առաջարկվող կառուցվածքը՝

«Վեդու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն	Մահճակալների թիվը 2020 թ. դրությամբ	Մահճակալների նախատեսվող թիվը
Վիրաբուժական	14	14
Թերապևտիկ	10	10
Մանկական	8	8
Ինֆեկցիոն	8	8
Գինեկոլոգիական	0	20
Մանկաբարձական	0	30
Ընդամենը	40	90

»,

բ. 8-րդ կետի երկրորդ, երրորդ, չորրորդ և հինգերորդ պարբերություններն ուժը կորցրած ճանաչել:

2. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետին՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 5 ամսվա ընթացքում ավարտել սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությամբ նախատեսված աշխատանքների իրականացումը՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, «Բաժնետի-րական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջ-ներին համապատասխան.

2) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 6 ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն ներկայացնել հաշվետվություններ սույն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված աշխատանքների իրականացման մասին:

3. Սահմանել, որ սույն որոշումից բխող բոլոր ծախսերը ենթակա են իրականացման՝ «Վեդու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության միջոցների հաշվին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ

2020 թ. օգոստոսի 28
Երևան